600.0069.15.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2017 թվականի №69Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N103Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Հատուկ հաշվից (հաշիվներից) վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգը հաստատելու մասին» N111Ն որոշումը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի փետրվարի 22-ի N04-ԿՀ-05/586 և N04-ԿՀ-05/587 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝
   1) «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիրը լուծելու մասին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների միջև 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված համաձայնագրին.
   2) «ԲՏԱ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիրը լուծելու մասին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական և «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությունների միջև 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված համաձայնագրին.

3) «Անելիք Բանկ» փակ բաժնետիրական ընկերության հետ 2017 թվականի փետրվարի 21-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրին:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերին համաձայնություն տալու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 11-ի N103Ա և 2013 թվականի հունիսի 26-ի N225Ա որոշումներում փոփոխություն կատարելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ա որոշման 1-ին կետից հանել ««Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ»,» և ««ԲՏԱ Բանկ»,» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
15 մարտի 2017թ.
ժամը 16^{00}